№ 211 Նոյեմբերի 27 (Դեկտեմբերի 9) 1880 Նոյեմբերի 27 (Դեկտեմբերի 9) № 211

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ-ին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն ծրագրամայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիեթօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կէս տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3. ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի կարեւոր խնդիր։—Ներքին տեսութիւն։ Նամակ Աւէքսանդրապօլից։ Նամակ Գօրուց։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հայք և Քուրդք։ Գերմանիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐ

Թիֆլիսեցի երիտասարդներից մինը նորերումս մի նամակ գրելով „Մշակին" հասարակութեան ուշադրութիւնը դարձրեց այն անմխիթար երեւոյթի վրա, որ Թիֆլիսում ուսում առնող գաւառացի չքաւոր դիմնազիստները ստիպված են ամեն օր էժան պանդոկներում ճաշել, որտեղ մի կողմից կերակուրը վատ է, միւս կողմից այդ տեսակ պանդոկներում հաւաքվող հասարակութիւնը ամենաստոր դասակարգին պատկանելով, մեր ուսում առնող երիտասարդները ստիպված են լինում այսպիսով յաճախել վատ շրջաններ, որտեղ լսում են անբարոյական խօսակցութիւններ, ծանօթանում են հասարակական զանազան զզուելի ախտերի հետ, վատ օրինակներ են առնում։

Այսպիսով դեռ թարմ հասակում մեր գաւառական ուսում առնող չքաւոր երիտասարդութիւնը բարոյապէս փչանում է։ Դիմնազիաների վարչութիւնը այդ հասկանալով, ինչպէս մեզ հաղորդում են, արգելել է աշակերտներին յաճախել այդ տեսակ յետընկած և էժան պանդոկներ, այլ առաջարկել է նրանց ճաշել մեր քաղաքի առաջնակարգ հիւրանոցներում։ Միտքը, ի հարկէ, շատ լաւ է, բայց առաջնակարգ հիւրանոցները թանգ են, ուրեմն ինչպէս խեղճերը կարող են իրագործել այդ իրանց տուած հրամանը, երբ նրանց նիւթական միջոցները չեն ներում առաջնակարգ հիւրանոցներում ճաշելու։ Ակամայ մարդս ինքն իրան մի հարց է առաջարկում։ Միթէ հասարակութիւնը անտարբեր կը մնայ դէպի իր ուսում առնող նոր սերունդի բարոյական կրթութիւնը, միթէ չի մտածի իրագործել չքաւոր ուսանողների համար այնպիսի մի հիմնարկութիւն, ինչպէս գրեթէ ամեն մի մեծ քաղաքում կայ, այն է մի էժան ճաշարան մեր դպրոցների աշակերտների համար, որտեղ նրանք կարող էին գտնել էժան և սննդարար կերակուր և չը հանդիպել այնտեղ զանազան փողոցային սրիկաների, գողերի, գիշերային աւազակների, հարբեցողների,—այլ ճաշէին իրանց մէջ, ընկերութեամբ։

Այդ տեսակ ճաշարան շատ հեշտ կը լինէր իրագործել, եթէ մեր բոլոր թէ պետական, թէ հայոց հոգեւոր և թէ մասնաւոր դպրոցների վարչութիւնները նշանակէին իրանց տարեկան բիւջէից մի աննշան գումար, ընտրէին իրանց միջից մի երկու մարդուց բաղկացած վարչութիւն, որ հսկէր այդ հիմնարկութեան վրա, նշանակէին մի տնտես յայտնի տարեկան ռոճիկով։ Աշակերտներից վերցվող ճաշելու համար փոքրիկ վարձը կը ծածկէր հիմնարկութեան տարեկան ծախսը։ Հարկաւոր չէ սպասել շահ այդ տեսակ օգտակար հիմնարկութիւնից, այլ բաւական է եթէ միայն ծախսը ծածկվի։ Իսկ եթէ կը պակասի գումարը, այդ պակասորդը կարելի է ամեն տարի լրացնել յօգուտ աշակերտական ճաշարանի տրվելու թատրոնական ներկայացումներից և այլ խնջոյքներից գոյացած գումարներով։

Հաւատում ենք թէ մեր բոլոր դպրոցների վարչութիւններին և թէ մեր հասարակութեանը մտածել այդ կարեւոր խնդրի վրա։ Թող կշռեն որքան մեծ վտանգ է սպառնում մեր ուսում առնող երիտասարդութեան բարոյական զարգացմանը յաճախել ամեն օր բարոյապէս փչացած շրջանները և մի և նոյն ժամանակ ընդունել վատ սրնունդ։

Մենք ինքներս մեր երիտասարդութեանը դեռ ամենաթարմ հասակում թոյլ ենք տալիս որ նա ֆիզիկապէս և բարոյապէս փչանայ և յետոյ զարմանում ենք, որ մեր նոր սերունդը ֆիզիկապէս և բարոյապէս փչանում է։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

17 Նոյեմբերի

Ամենայն մի նոր ճշմարտութիւն մի որ և իցէ ազգի կամ հասարակութեան մտաւոր կեանքի մէջ մուտք գործելիս՝ բարձրացնում է աղմուկ և ընդդիմադրութիւն։ Ամենայն մի նոր վարդապետութիւն, որքան էլ ուղիղ և դիւրըմբռնելի լիներ, կրում է հալածանք ժամանակակից խաւարասէրներից, գրգռում է մոլեռանդ ամբոխի զայրոյթը։ Կազմվում է այդ նոր սկզբունքի հակառակ հնամոլների մի ընդդիմադրական բանակ, երեւում են նեղսիրտ հակառակորդներ, խաւարի և նախապաշարմունքների ջերմ պաշտպաններ լոյսի և ճշմարտութեան դէմ, երբ այն ազգի մեծամասնութիւնը դեռ չէ հասած լինում այն աստիճան մտաւոր զարգացման, որ՝ պատրաստ լինէր ըմբռնելու նոր վարդապետութեան ճշմարտութիւնը։

Եթէ այդ նոր ճշմարտութեան վարդապետը լինէր՝ դիւրաբեկ, շուտ ընկճվող և թոյլ կամքի տէր անձնաւորութիւն, նրա բոլոր քարոզութիւնը, նրա բոլոր ջանքը իր յայտնած ճշմարտութիւնը պաշտպանելու և յառաջ մղելու կը մնային ապարդիւն։ Նրա բոլոր խօսքերը կը մնային միայն լոկ խօսքեր, կը դառնային «Ձայն բարբառոյ յանապատի»։ Հակառակորդների անընդհատ հալածանքներից շուտով կը խորտակվեր նրա բարոյական զօրութիւնը և հոգեկան ոյժը։ Կը խեղդվեր նրա ձայնը կոկորդում մոլեռանդ ամբոխի կատաղի աղաղակների մէջ և նրա յայտնած նոր միտքը կը մեռնէր նոյն իսկ իր սկզբունքի մէջ։ Բայց երբ այդ ճշմարտութեան առաջնորդողը լինում է՝ մաքառող, անվեհեր, հզօր և մի գերազանց կամքի տէր անձնաւորութիւն և արհամարհելով խաւարասէրների առեղութիւնը, հակառակորդների հալածանքը, թշնամիների կատաղութիւնը իրանց ամենաստոր և զզուելի ինտրիգներով, վերջապէս արհամարհելով ամենայն մի արգելաւոր, որը կարող էր բռնի չեղել իր ընտրած որոշ ուղղութիւնից, հպարտ և անյողդողդ քայլերով դիմում է ուղղակի դէպի յառաջ, դէպի նպատակը, յաղթահարելով իր ընթացած ճանապարհի վրա բոլոր հանդիպած արգելքները, այն ժամանակ նրա քարոզած ճշմարիտ սկզբունքը, կամաց կամաց, հարթում է իր առաջ ճանապարհը խաւարի մէջ, կամաց կամաց մուտք է գործում ազգի մտաւոր կեանքի մէջ, գտնում է արձագանք, գրտնում է ընդունելութիւն ամբոխի մէջ և, հաւաքելով իր հետեւողների թիւը, վերջապէս գառնում է մի տարրական ճշմարտութիւն։

Խօսքերս հաստատելու համար չը գնանք շատ հեռու, չը խորասուզվենք անցեալի մէջ։ Մի կողմ թողած պատմական շատ իրողութիւններ, որոնցից ամեն մէկը կարող էր այստեղ ծառայել իմ ասածներին որպէս զօրաւոր փաստ, ես դիմում եմ միայն վերջին միջոցներումս մեր գրականական ասպարէզի մէջ կատարված մի յանդիմանելի իրողութեան։

Երբ «Մշակը» բարձրացրեց «ազգային միութեան» հարցը, անուանելով զանազան դաւանութիւնների պատկանող հայերին մի և նոյն ազգութեան հարազատ զաւակներ, երբ «Մշակը» սկսեց պարզել ազգային և կրօնական գաղափարների տարբերութիւնը, ցոյց տալ այն անդունդը՝ որը բաժանում է ազգութիւնը կրօնից, երբ «Մշակը» սկսեց բացատրել թէ՝ կրօնը, որպէս անդաղար կերպարանափոխութեան ենթակայ մի սկզբունք, չէ կարող համարվել հիմքը մի որ և իցէ ազգութեան, որ ամենայն մի ազգութեան հիմունքն են գլխաւորապէս՝ լեզուն, յետոյ հայրենիքը և այլ ցեղական առանձնայատկութիւնքը, ուրեմն մի ազգութիւն մի այլ ազգութիւնից ջոկող ամենաորոշ յատկանիշն է՝ լեզուն և ոչ թէ կրօնը, որ մի անհատի ինչ ազգութեան պատկանելը որոշվում է ոչ թէ նրա այս կամ այն եկեղեցին յաճախելուց, ոչ թէ նրա այս կերպ կամ այն կերպ Աստուած դաւանելուց, այլ ուղղակի՝ նրա ինչ լեզուով խօսելուց, երբ «Մշակը» կրկնում ենք, յայտնեց այս ամենապարզ ճշմարտութիւնը, որը այլ զարգացած ազգերի համար արդէն դարձել է մի տարրական համոզմունք, մեր այլազաւան ազգային մասերը միութեան կապով կապելու համար,—մի յայտնի «յետադէմ» լրագիր իսկոյն բարձրացրեց իր ճիչն ու բողոքը այս ճշմարիտ վարդապետութեան դէմ։ Տիրացու «Մեղուն», «Մշակի» յառաջադիմութեան այդ երդուեալ թշնամին, մի չար դիտաւորութեամբ աղաւաղելով նրա յայտնած միտքը և «ազգային միութեան» հարցին տալով կրօնական կերպարանք, «լսեցէք, լսեցէք, աղաղակեց, «Մշակը» կրօնափոխութիւն է քարոզում, «Մշակը» մեր եկեղեցին ուզում է քանդել, ազգի մէջ երկպառակութիւն գցել, մեզ հայութիւնից դուրս հանել», և, վերջապէս, շատ այսպիսի մեղադրանքներ սկսեց բարդել «Մշակի» վրա։

Զար դիտաւորութեամբ ասացի և պիտի բացատրեմ թէ՝ ինչու։

Ստրկահոգի հասարակական գործիչներին յատուկ է միշտ հակվել մեծամասնութեան կողմը, անպատճառ պաշտպանել նրա կարծիքներն ու հայեացքները, որքան էլ հին, մաշված և սխալ լինէին այդ կարծիքները։ Նրանց միայն ընդունելի է այն՝ ինչ որ ընդունում է մեծամասնութիւնը, նրանց համոզմունքը կը լինի այն, ինչ համոզմունք որ ունի մեծամասնութիւնը։ Զուրկ լինելով բոլորովին ինքնուրոյն և մրցող բնաւորութիւնից, այսպիսի գործիչները երբէք ընդունակ չեն մաքառել, դէմ լողալ ընդհանուր հոսանքին, այլ, կրաւորապէս, միշտ ենթարկվում են այդ հոսանքի ընթացքին։ Ես հաստատապէս համոզված, եմ որ եթէ ամբոխը աղաղա-

կելու լիներ թէ՝ արեգակի ճառագայթները սև գոյն ունեն, այսպիսի հասարակական փորոտ չողոքորթները, ամբոխին հաճոյանալու նպատակաւ, պատրաստի կը լինէին հաստատելու նրա թիւր կարծիքը, պատրաստ կը լինէին իրանք էլ իսկոյն բացականչելու՝—«Այո՛, այո՛, ճշմարիտ է, արեգակի ճառագայթները սև գոյն ունեն։»

Անարգանք և թուք հասարակական կարծիքի այն առաջնորդներին, որոնք օգտվելով մոլեռանդ ամբոխի խաւարասիրութիւնից, ճշմարտութիւնը զոհում են նրա տգիտութեանը ժողովրդականութիւն ձեռք բերելու նպատակաւ։

«Մեր ազգը դեռ տգէտ է,—մտածում է «Մեղուն»,—նրա հասկացողութեանը դեռ անմատչելի է ազգութեան գաղափարը։ «Մշակի» քարոզութիւնը դեռ անժամանակակից, դեռ շատ վաղ է։ Նրա «ազգային ինքնաճանաչութիւն» խօսքը չի գտնի ընդունելութիւն, չի գտնի արձագանք ամբոխի մէջ։ Պէտք է օգտվել ամբոխի տգիտութիւնից և հարուածել «Մշակի» անժամանակակից քարոզութիւնը և սրանով մեծ վնաս կարող եմ հասցնել նրա ժողովրդականութեանը։»

Պէտք է մտաւորապէս բոլորովին կոյր, երեխայամիտ կամ ապուշ լինել չը տեսնելու «Մեղուի» այս խարդախ վարմունքը և հասկանալու մի այդպիսի սուտ վարմունքի ամենադլխաւոր չարժառիթը։

Թէ չէ, էլ ինչ կերպ բացատրել այն զզուելի երևոյթը, որ «Մեղուն» ամենայն մի հարցի մէջ, որ արծարծում է «Մշակը», լիներ այն ազգային, կրօնական, հասարակական, վերջապէս ամենայն մի հարցի մէջ, ինչ տեսակ հարց էլ որ լիներ, անչուշտ պիտի հարուածէր ու պիտի հերքէր, ըստ որում այդ հարցի արծածողն «Մշակն» է եղել։ Ինչ որ ճշմարիտ և սպիտակ է եղել «Մշակի» մէջ, նա անչուշտ խաբէութիւն և սև է եղել «Մեղուի» կարծիքով։ Գոնէ մինչև այսօր ուրիշ չնորհ չենք տեսել այդ հոտած լրագրից։

Բաւական չէ, որ «Մեղուն» միշտ հակառակում և հերքում «Մշակի» ասածները, երբեմն դիտաւորութեամբ չեղում, այլափոխում էլ է նրա ասածները, նրա յայտնած մտքերին տալիս է բոլորովին մի այլ կերպարանք, ինչպէս այդ տեսանք փորձով վերջին բանակռիւի մէջ։

Հաւատարիմ մնալով իր ընտրած ուղղութեանը՝ անպատճառ վնասել «Մշակի» վարկին, առաջնորդված կոյր նախանձից և հիմնված վատթար չանմտութեան պրինցիպի վրա, «յետադէմ» լրագիրը «Մշակի» յարուցած «ազգային միութեան» հարցին «կրօնափոխութեան հարցի» կերպարանք տուեց և սկսեց իր անսանձ և վայրի վերոյ չաղակրատութիւնները։ Եւ մաքառելով ժամանակակից պահանջի դէմ, և յամառելով իր խաւարասէր կարծիքների մէջ, սկսեց մի երկարաձիգ և տաղտկալի պօլեմիկա «Մշակի» դէմ։ Պառաւական փտած կարծիքներ, հիւանդ ուղեղից վիժված խակ դատողութիւններ, ստոր գրչից դուրս եկած վայրաչաչ ֆելիետոններ, հայհոյանք, զզվարանք և շատ ուրիշ այս ձևի և այս բովանդակութեան յօդուածներ սկսեցին ծաւալել այդ լրագրի էջերը, պատճառելով գարշանք ընթերցողներից շատերին։

Բայց ինչ եղաւ «Մեղուի» այսչափ վայրիվերոյ գրուածների հետևանքը։ Հետևանքը այն եղաւ, որ նա անմիջապէս վայելեց իր գործած սխալանքի դառն արդասիքը։ «Մեղուն» չարաչար սխալվեց իր «գոյութեան կուի» հաշիւների մէջ. և ահա թէ ինչպէս։

Ազգը չէր այնքան նախապաշարված, չէր տգէտ, չէր այն մտաւոր խաւար կացութեան մէջ, որը վերագրում էր նրան «Մեղուն»։ Ազգը չէր մտաւորապէս այնքան անպատրաստ ըմբռնելու «Մշակի» նոր վարդապետութեան խմաստը, ճանաչելու՝ ազգայնութեան գաղափարի վսեմութիւնը, ինչպէս կարծում էր «Մեղուն»։ Մի նշանաւոր, մտաւոր զարգացման նպաստող ժամանակամիջոց անց էր կացել այդ «յետադէմ» լրագրի առաջից, բայց նա, իր յատուկ կարճատեսութեամբ, չէր նչմարել այդ ժամանակամիջոցը։ Մի նշանաւոր, ազգը լուսաւորութեան շաւղի վրա յառաջ մղող ժամանակամիջոց անց էր կացել բայց «Մեղուն», այդ անանիւ սայլակը դեռ ևս մնացել էր կանգնած այն տեղի վրա, որտեղից միշտ աշխատել էր առաջ գնալ։

Կարծեմ յիշում են ընթերցողները, որ չանցաւ շատ ժամանակ և «Մշակի» յայտնած ճշմարտութիւնը գտաւ արձագանք շատ տեղերում։ Ամենայն մի հայ մարդ, որը զարգացել էր մտաւորապէս այնքան՝ որ կարողանար գերադասել ազգութեան գաղափարը կրօնական գաղափարից, շտապեց իսկոյն ձայնակցել «Մշակին»։ Զանցաւ շատ ժամանակ և ահա ամեն տեղից թափվեցան «Մշակի» խմբագրատան մէջ համակրական և պաշտպանողական նամակներ։ Այս նամակագիրներից ոմանք յայտնում էին իրանց ջերմ համակրութիւնը մեծ. պ. Արծրունուն նրա արծարծած ազգաշահ հարցի մասին. ջատագովում էին նրա կատարած յառաջադիմական քայլը կամ քաջալերում. իսկ ոմանք պաշտպանում էին նրա քարոզած ճշմարտութիւնը հնամտների խաւարասիրութեան և անազնիւ թշնամիների ափեղցիկ գրուածքների դէմ։

Այս, «Մեղուի» համար, անպասելի երևոյթը փոխանակ նրան խելքի բերելու, էլ աւելի գըրգռեց նրա ատելութեան զգացմունքը «Մշակի» դէմ։ Խմբագրի նախանձութեան կիրքը հասաւ իր ամենաբարձր աստիճանին։ Անաչառութիւն, աղնուութիւն, բարեխղճութիւն, գրականական պատշաճութիւն, համեստութեան չափ ու սահման, խոհեմութիւն, խելք, սառը դատողութիւն,—այս բոլորը, բոլորը զոհվեց նրա թշնամական տանձարձակ կրքին։ Երբ «Մեղուն» ցաւօք սրտի նկատեց, որ իր բոլոր բանակռիւը ոչ միայն անդուր դարձաւ «Մշակի» ժողովրդականութեանը վնասելու, այլ, ընդհակառակը, էլ աւելի նպաստեց նրա հեղինակութեան բարձրանալուն, էլ աւելի շատացրեց նրա համակրողների և պաշտպանների թիւը և նրա յայտնած ճշմարտութիւնը զտաւ ընդունելութիւն շատ և շատ տեղեր, երբ «յետադէմ» լրագիրը զգաց, որ իր բոլոր չարամտութիւնը մնաց ապարդիւն և իր խարդախ միջոցները չարդ ու փչուր դարձան «Մշակի» եռանդոտ մրցողութեան առաջ և «Մշակը» դարձեալ մնաց իր ընթացած շաւղի վրա մի և նոյն անդրդվելի «Մշակը», ինչպէս մի քաջասիրտ ըմբիշ մենամարտութեան կրկէսում, այն ժամանակ այդ անպատկառ լրագիրը, բոլորովին կուրացած նախանձից, դիմեց մի ամենածայրայեղ լրբութեան։ «Կեղծ են, ստնծու են, աղաղակեց, այդ նամակները, որոնք ապվում են Մշակի մէջ»։

Այս յանդուգն կասկածանքը շատ վիրաւորիչ և ծանր թափեցաւ «Մշակի» աշխատակիցներին և նրանցից շատերը շտապեցին իսկոյն ապացուցանել այդ կասկածանքի բոլոր ստորութիւնը։ «Մշակ»-ի ընթերցողները անչուշտ նկատած կը լինեն, որ այնուհետև «Մշակի» թղթակիցներից շատերը յանձնառու լինելով տանել «Մեղուի» խայթոցը, յօդուածների տակ ստորագրում էին իրանց իսկական անունները։

«Մեղուն» դեռ ևս չէ դադարել օգտվել ամբոխի տգիտութիւնից. նա դեռ ևս գրգռում է ամբոխի մոլեռանդութիւնը և նրա այս սխալ վարմունքը փայփայում է և ջատագովում մի խաւարասէր տարր։ Բոլորովին վերջ կը տայ, թէ դարձեալ կը շարունակէ նա իր անվերջ բանակռիւը «Մշակի» դէմ, այդ իր խելքի բանն է. բայց ես միայն այս անհերքելի ճշմարտութիւնը կարող եմ, հէնց հիմիկվանից, ամենայն վստահութեամբ յայտնել «Մեղուին», որ գրականական բոլոր վայրահաչութիւնները անզօր են վնասելու «Մշակին», քանի որ այդ լրագրի առաջնորդողն է՝ մի մաքառող, հզօր և գերազանց կամքի տէր անձնաւորութիւն։

Ցեղացի

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

—

Հոկտեմբերի 28

Կարդացինք «Մշակ» լրագրի № 184-ում տպված Գօրուց մի նամակ յաջորդ Գառնակերեանց Գրիգոր վարդապետի վերաբերութեամբ, կարդացինք և շատ ցաւեցանք, ոչ թէ նրա մէջ բովանդակված կարծիքների անիրաւացի լինելու վրա, այլ նամակագրի մտաւոր կուրութեան վրա։ Ուստի պարտք ենք համարում այս մասին մի քանի խօսք ուղարկել «Մշակի» ընթերցողներին։

Պ. Նամակագիրը յարձակվում է Գառնակերեանց վարդապետի վրա և արհամարհական հայեացք է ձգում նորա քարոզի վրա, որ կարդաց ս. Խաչի վերացման տօնին սուրբ Աստուածածնի եկեղեցում։ Պարոնը ասում է, ի միջի այլոց, թէ՝ «իրաւ, մարդիկ հետևելով ս. Աւետարանի խօսքերին, փրկվեցան շատ չարիքներից, բայց ինչպէս երևում է, մեր ծիսական երկսեռ դպրոցների անմխիթար դրութիւնից, դեռ մնացել են շատ սատանաներ, որոնց ձեռներից դեռ ևս ազատված չենք, և յայտնի չէ, թէ երբ պիտի ազատվենք»։ Այո՛, նամակագիրը իրաւ է դատում, որ մեր հասարակութիւնը և մեր ծիսական դպրոցները վաղուց յետէ դարձել են ոչ թէ միայն մի քանի սատանաների, այլ և մի բէեղզեբուղի խաղալիք, որ սրանից քսան տարի առաջ բուն է դրել մեր քաղաքում։ Ի հարկէ, նա իր արբանեակներն էլ ունի, մենք էլ շատ ենք ցաւում, որ նրանց ձեռքից դեռ ևս ազատված չենք. մենք էլ գիտենք, որ մինչև այդ խռովարարը չը հալածվի, երբէք մեր դպրոցների բարեկարգութեան յոյս չը կայ։ Գրեթէ մեր յաջորդներից ոչ ոք չէ հեռացել Գօրուց, որ այդ խռովարարից և նրա արբանեակներից հալածված չը լինի։ Պիտի խոստովանենք, որ վ. Գառնակերեանցը իր պաշտօնավարութեան երկու տարվայ ընթացքում, իր կարողութեան չափ, միշտ ջանացել է հսկել մեր դպրոցների վրա։ Նա տեսաւ, որ հոգաբարձուները միայն լոկ անունով էին համարվում մինչև այն օրը, նրանք ոտք անդամ կոխած չէին ուսումնարանում, և դպրոցները մնացել էին անխնամ. 1879 թվի յունիս ամսին, քահանաների միջոցով հրաւիրեց յաջորդաբանը քաղաքիս հայ հասարակութիւնը նոր հոգաբարձուներ ընտրելու։ Հասարակութեան մեծամասնութեան հաւանութեամբ և քուէարկութեամբ մի քանի գործունեայ անձինք հոգաբարձու ընտրվեցան։ Վեհափառ Հայրապետն էլ հասարակութիւնից ուղարկված ընտրութեան թերթի համաձայն իր օրհնութեան կոնդակով հաստատեց նրանց նոյն պաշտօնի մէջ։ Նորահաստատ հոգաբարձուները արդէն ծանօթ լինելով, որ չունեն օրինաւոր ուսուցիչներ և դպրոցների ներքին կազմակերպութիւնը խանգարված է, հասարակութեան խորհրդով և նոյն իսկ ուսանող աշակերտների և աշակերտուհիների ծնողների ցանկութեամբ և համաձայնութեամբ, դպրոցների նիւթական դրութիւնը ապահովելու համար, մոռդրվեցին դրամական նուէրներ ժողովել՝ և նոր օրինաւոր ուսուցիչներ հրաւիրել կրկնապատիկ ռոճիկով։ Ի հարկէ, Գառնակերեանց վարդապետն էլ, որ հոգաբարձութեան նախագահ էր, համակրելով այս օգտաւէտ ձեռնարկութիւններին, տուաւ նրանց մի ժապաւենեալ մատեան, որի մէջ բաւականին մարդիկ ստորագրվեցան, և ամենքն էլ խոստացան տալով ամեն տարի քսան—քսան բուբլ վճարել, այսպիսով մի նշանաւոր գումար էր գոյանում։ Այդ մասին խորհրդակցելու համար հրաւիրեցին և թեմական վերատեսչին։ Երբ այս նպատակը իրագործվելու վրա էր, հասաւ յիշեալ խռովարարը, որ հոգաբարձուաց ընտրութեան միջոցին բացակայ էր քաղաքից. երբ տեսաւ, որ ընտրված հոգաբարձուների շարքում ոչ ինքն է գըտնվում և ոչ էլ իր արբանեակներից մէկը, և մանաւանդ լսելով, որ հոգաբարձուները նոր ուսուցիչներ հրաւիրելով, իր արբանեակ ուսուցիչները պիտի արձակվէին, նա սկսեց այնուհետև հասարակութեան մէջ իր սովորական մաքիավելական միջոցները գործ դնել, որպէս զի կարողանար նորընտիր հոգաբարձուներին փոխել և նրանց տեղը իր արբանեակներին ընտրել տալ։ Սորա համար առաջ թեմական տեսչին հրապուրելով իր կողմը գրաւեց, համոզելով, թէ այն հոգաբարձուները անհաւատարիմ մարդիկ են, նորանց ընտրութիւնը ապօրինի է, անվաւեր է, և թէ Վեհափառ Հայրապետը ինչու պիտի սահմանափակէր նորա իրաւունքները նրանց հոգաբարձական պաշտօնի մէջ հաստատելով, և այլն։ Ապա նոր հոգաբարձուների վրա չանթեր թափեց, նրանք էլ վախեցան ու պաշտօնի մէջ չը մտան։ Այսպէսով նրանց բարի նպատակը մնաց անկատար և դպրոցներն էլ մնացին անխնամ, որով խռովարարը հասաւ իր նպատակին։ Բայց մի և նոյն ժամանակ նա իր հայրենակիցների և ժողովրդի ցաւին ցաւակից ձևացաւ, դրդռեց իր արբանեակներին, ընտրեց նրանց միջից նոր հոգաբարձուներ և առաջարկեց Վեհափառ Հայրապետին, որ նրանց հաստատէր, հաւատացնելով, թէ հէն հոգաբարձուները անհաւատարիմ և անարժան մարդիկ են, իսկ ինքն և իր ընտրած մարդիկը արժանաւոր։ Այսպիսի միջոցներով խռովարարը մեր ժողովրդի մէջ երկպառակութիւն ձգելով, մեր երկսեռ դպրոցների փակման և անմխիթար դրութեան պատճառը ինքն եղաւ և ոչ թէ Գառնակերեանց վարդապետը։ Նա աղքի յառաջադիմութեան ցանկացող էր, ոչ թէ վնասակար։ առաջին անդամ, երբ եկաւ նա Գօրի, տեսաւ, թէ յաջորդարանը, որ պատրաստել էին նորա բնակութեան համար, արդիւնարեր կարող է լինել դպրոցների համար, 600 բուբլ վարձով տուեց, իսկ ինքն, որի համար հոգևոր իշխանութիւնը յատկացրեց տան վարձի հաշուում 200 ր., աշխատեց դարձեալ էժան գնանոց՝ 150 բուբլանոց բնակարանի մէջ բնակվելու մնացած յիսուն բուբլն էլ տալիս էր ժողովրդին։ Բայց ի վերջոյ վարդապետը երբ տեսաւ, որ իր պաշտօնավարութեան իւրաքանչիւր քայլափոխի առաջ յիշեալ խռովարարից զանազան արգելքներ և դժուարութիւններ են դրվում, երբէք անգամ հրաժարական տուաւ Վեհափառ Հայրապետին, բայց Վեհափառն էլ գիտենալով նորա ազնիւ բնաւորութիւնը, որով գրաւած էին Գօրու և վիճակի ժողովուրդը, ամենևին չէր արձակում։ Վերջապէս հայր սուրբը Էջմիածնից ստանալով իր պաշտօնից արձակման հրամանը, անցեալ սեպտեմբեր ամսի 14-ին, ս. Աստուածածնի մայր եկեղեցում ս. պատարագի ժամանակ, ուր ներկայ էր ժողովրդոց խուռն բազմութիւն, մի ազնիւ ատենաբանութիւն ուղղեց իր սիրելի հօտին, որի մէջ հրաւիրում էր ժողովրդին դէպի միաբանութիւն, առաջարկում էր խնամք տանել իրանց դպրոցների վրա և չը զրկել իրանց մատաղ սերունդը մայրենի լեզուից և դաստիարակութիւնից. ապա և իր վերջի օրհնութիւնը տալով, յայտնեց թէ՝ ինքն թէև բաժանվում է նրանցից, բայց երբէք մոռանալու չէ նրանց։

Պատարագը աւարտելուց յետոյ, ժողովուրդը հաւաքվեցաւ եկեղեցու գաւթում, սկսեց անէծք թափել խռովարարի գլխին, որ հանգստութիւն չը տալով հոգաբարձուներին, դպրոցների փակման և յաջորդի յուսահատութեան և անջատման պատճառ եղաւ։ Իսկ հայր սուրբը սեպտեմբերի 16-ին մեկնեցաւ քաղաքից։ Իսկ պ. Նամակագիրը աշխատելով յիշեալ խռովարի յանցանքները հայր Գառնակերեանցին վերագրել, շարունակում է իր խօսքը ասելով—թէ՝ «Ով որ կը մտնի ս. Աստուածածնի եկեղեցու գաւիթը և կը տեսնի մեր քանդված երկսեռ դպրոցները, ով որ կը տեսնի նրանց աւերակները, նա անմիջապէս կը յիշէ անխոնջ վաստակ ու քաջագործութիւնը հ. Գառնակերեանցի. այդպիսի հետքերը շուտ չեն ջնջվում և չեն մոռացվում։» Ի՞նչով է մեղաւոր հ. Գառնակերեանցը այդ անիրաւութիւնների մէջ, թողնում ենք ընթերցողին մտածել։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մի երիտասարդ եկած էր Թիֆլիս մի քանի ամիս առաջ, Ս. Պետերբուրգ ուղևորվելու նպատակով։ Պարոնը կարնեցի հայ էր, ուսում էր առել Կ. Պոլսի Նուբար-Շահնազարեան դպրոցում և ցանկանում էր շարունակել իր ուսումը Ս. Պետերբուրգում։ Էրզրումի հայոց եպիսկոպոս Օրմանեանը տուել էր երիտասարդին մի յանձնարարական նամակ դէպի պ. Սանասարեանց։ Երիտասարդը նախ քան ճանապարհ կընկնէր դէպի հիւսիս, նամակ գրեց Սանասարեանցին, խնդրելով ընդունել իր սաների թիւում։ Ոչինչ պատասխան չը ստանալով, դարձեալ գրեց, ուղարկեց նրան և Օրմանեանի յանձնարարականը, վերջապէս և հեռագրեց, որ գոնէ բացասական պատասխան ստանայ և կրկին վերադառնայ Կարին, քանի որ ցուրտ չէ,—բայց ոչինչ պատասխան չը կայ։ Երիտասարդը ստիպված է Թիֆլիսում պարապմունք որոնել, չը կարողանալով ձմեռ ժամանակ վերադառնալ Էրզրում։

—

Մեզ հաղորդում են, որ մի Թիֆլիսեցի երիտասարդ պատրաստել է մի բրոշիւր պ.պ. Օրբէլ Օրբէլեանցի և Կարապետ Բելախեանցի մասնաւոր դպրոցի մասին։ Հեղինակի նպատակն է բացատել, ինչպէս ինքն կարծում է, մի քանի կոյր աչքեր։ Բրոշիւրը նուիրված կը լինի ուսումնարանի ներքին կազմակերպութեան նկարագրութեանը և պատմում է, թէ ինչպէս է նա իր գոյութիւնը պահպանում։

—

Ահա երեք օր է, որ ԹԻՖԼԻՍՈՒՄ սաստիկ ձիւն է գալիս։ Քաղաքի բոլոր շրջականներն էլ ծածկվել են ձիւնի հատ սպիտակ սաւանով։

—

Ս. Պետերբուրգի ֆրանսիական «Journal de St-Petersb.» լրագիրը հաղորդում է, որ քիւրդերը Պարսկաստանում կատարելապէս ջարդվեցան պարսից զօրքերի ձեռքով։ Շեյխ-Ութաղուլլահ համոզվեց, որ անզօր է պատերազմել Պարսկաստանի դէմ։

—

«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ տպագրական ցէնզուրան ոչնչացնելուց յետոյ, մամուլը ենթարկված կը լինի ոչ թէ մասնաւոր դատարանին, ինչպէս հաղորդում էին հեռագրով, այլ ընդհանուր դատարանների երկու կայարաններին, այն է դատաստանական պալատին և Սենատին։

—

Այսօր, հինգշաբթի, նոյեմբերի 27-ին, հայոց դերասանական մշակաւոր խումբը Ամարային թատրոնում կը ներկայացնէ երրորդ անգամ Վիլիամ Շէքսպիրի «Համլէտ» ողբերգութիւնը յօգուտ խմբի յուշարար պ. Կ. Մատինեանցի։ Պ. Մատինեանցը հայոց մշակաւոր խմբի ամենաաշխատասէր և խղճմտանքով գործողներից մինն է։

ԸՐՏԵՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑՔ ԵՒ ՔՈՒՐԴՔ

—

Գոհութեամբ կը լսեմք որ, Ազգանուէր-Հայուհեաց ընկերութեան Քղիի համանուն քաղաքի մէջ կառուցած նորաշէն դպրոցն ընդունելու համար, հարիւրէ աւելի Քրդուհիներ խնդիր մատուցեր են ընկերութեան պատուիրակ Սեծ. Վասիլեան էֆէնտիի, որ հրահանգ խնդրեր է, և կարծեմք պատասխան պիտի տուուի եղեր իրեն թէ Քղիի մէջ բացուած օրիորդական վարժարանէն մեր Քուրդ հայրենակիցք ալ օգուտ կրնան քաղել։

Եթէ այս լուրն ստուգուի, կարևորութիւնն անժխտելի է։ Մեր նպատակն այս անգամ Իւսկիւտարի Ազգանուէր-Հայուհեաց բարեջան ընկերութեան վրայ խօսիլ չէ։ ,,ԿՐԹՈՒԹԻՒՆ ՀԱՑ ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ'' մակագրով յօդուածներուն շարունակութեանը մէջ, այս ընկերութեան և նորա վաստակոց ու փառաց ընկերուհւոյն՝ Օրթագիւղի Դըպրոցասէր-Հայուհեաց ընկերութեան՝ վրայ երկարօրէն գրելու առիթ պիտի ունենամք, մանաւանդ երբ սկսեմք քննել այն տարեկան տեղեկագրերը, զորս յիշեալ ընկերութիւնք մօտերս հրատարակած են։

Բայց Քղիի դէպքն ուշադրութեան արժանի է գաղափարաց ուրիշ կարգով մ'ևս։ Քրդաց հետ ներկայիս և ապագայիս մէջ մեր ունենալիք յարաբերութեանց մասին՝ այս տողերն ստորագրողին գաղափարներն հանրածանօթ են արդէն։ Ուստի, մասնաւորապէս ուրախ եմք տեսնելով իրողութիւն մը, որ գործնական հաստատութիւն տալ կը թուի մեր գաղափարաց։ Մեք Քրդաց հետ բարեկամութիւն կը ջատագովեմք։ և կարծեմք բարեկամութեան առաջին գործն է մեր Քուրդ հայրենակիցները մասնակից ընել այն լուսոյ սննդեան, զոր կը ջամբեմք մեր Հայաստանցի զաւակաց։ Ը փափաքիմք որ Քրդաց հետ հաշտարար և խաղաղասէր ընթացք մը բռնեմք։ և կարծեմք հաշտութեան կամ խաղաղութեան ոգին ամենէն յառաջ դպրոցական յարկէն կը սկսի։ Նաև կը պնդեմք որ գաղափարակից լինիմք Քրդաց հետ այն ամեն նիւթոց վրայ, որք երկրին հաւաքական շահուց կը վերաբերին։ և կարծեմք գաղափարաց համաձայնութիւնը դպրոցներէն դուրս ո՛չ մի տեղ և ո՛չ մի եղանակաւ չը կրնար աւելի հզօրապէս հաստատուիլ։ Ուստի; երբ Քուրդեր և Քրդուհիներ փափաքին մեր ուսումնական յարկերուն ներքև մտաւոր մշակութիւն ստանալ, նոցա այս խնդիրն ամենայն սիրով ընդունիլ՝ ամենակարևոր միջոց մ'է վերաբերութեամբ այն բարեկամութեան, որ Հայոց և Քրդաց միջև, իբրև հայրենակցաց միջև՝ պարտի կենալ, և արդէն կայ այլ և այլ դաւառաց մէջ։ Ամեն ողջամիտ ազգային, հետևաբար, յոյժ գոհ պիտի լինի եթէ հաստատութիւն գտնէ մեր այն կարծիքը թէ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը դիտաւորութիւն ունի պէտք եղած սրտօնութիւնը տալ իւր ներկայացուցչին, որպէս զի Քրդուհիք ևս ընդունուին ընկերութեան օրիորդական վարժարանն որ ի Քղի։

Նոքա որք ցարդ իրենց նիւթական և բարոյական օգնութիւնը չեն զլացած այս Ընկերութեան, լաւագոյն գործածութիւն մը չէին կրնար ապասել այն միջոցներուն, զորս Ազգանուէր-Հայուհիք իրենց ձեռաց մէջ ունին այժմ։ Քուրդ տղայոց մեր տղայոց հետ հաւասար կրթութիւն մը տալով, զանոնք վարժեցուցած կը լինիմք ապագային մէջ իրենց Հայ հայրենակիցներն իրաք իբրև եղբայր նկատելու։ և երբ Երզնկայի և Քղիի կողմը Հայկական վարժարաններ յաճախող այս Քուրդ պատանիք ու Քուրդ օրիորդք մի օր Հայր կամ մայր լինին, նոցա բարի օրինակը հզօր տպաւորութիւն կընէ ո՛չ միայն իրենց ընտանեաց անդամոցը վրայ, այլ և դրացեաց վրայ։ Այսպէս, ժամանակ է գործնական կերպիւ իրացնելու ,,Օսմանլի'' ի այն խօսքը թէ եկեղեցիէն և մզկիթէն դուրս չիք խարութիւն տէրութեան Քրիստոնեայ և Իսլամ ժողովրդոց միջև։ Լթէ մեր նպատակը, բոլոր այս ազգային ընկերութիւնները քաջալերելով, ծառայութիւն մը մատուցանել է Հայաստանի, քիչ պարագայներ կան յորս աւելի օգտակար ծառայութիւն մը կարենամք մատուցանել մեր Հայրենեաց։

Առանց աւելի ևս ծանրանալու այս կէտին վրայ, կը մաղթեմք որ մեզ տրուած լուրն իւր ամեն պարագայիւք ստոյգ ելնէր, և այս իրողութիւնը քաջալերութիւն մը լինէր նմանօրինակ օգտակար ձեռնարկութեանց, որք ա՛յնքան մեծ կարևորութիւն ունին մեր հայրենի երկրին ապագայ հանդարտութեան ու բարգաւաճման տեսակէտով։

(Մասիս)

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Բերլինից, նոյեմբերի 19-ից։ Այսպէս անուանված ,,հրէական հարցը'' մի քանի ժամանակից այնպէս զբաղեցրել է Բերլինի զանազան շրջաններին, որ գրեթէ նրանցից ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում քաղաքական նշանաւոր հարցերի վրա։ Մոխրի տակ ծածկված այդ կայծը նորից յայտնվեցաւ, երբ քաղաքային վարչութեան նախագահ նշանակվեցաւ հրէայ Շտրասման և երբ կռիւ պատահեցաւ գերմանացի ուսուցչի և հրէայ գիմնազիստի մէջ։

Հակասեմիտական շարժումը արդէն մօտ երկու տարի է, ինչ գոյութիւն ունի և սկսված է պալատական քարոզիչ Շտէօկերից և զարգացել է պրոֆէսսոր Տրէյչկէի ջանքերով։ Շտէօկեր եղբայրացրեց, որ հրէաները սպառնում են քրիստոնէութեանը, Տրէյչկէի կարծիքով հրէական ազդեցութիւնը վտանգաւոր է գերմանականութեան համար։ Այս պրոֆէսորի աշխատութեամբ ատելութիւնը դէպի հրէաները տարածվեցաւ մինչև անգամ հասարակութեան կրթված դասակարգերի մէջ, որոնցից շատերը արձագանք են տալիս ամեն բանին, ինչ որ յայտնում է ուսումնական աշխարհի հեղինակութիւններից մէկը։ Տրէյչկէի գլխաւոր մեղաւորութիւնն է, որ հակահրէական շարժումը այդպիսի ընդհանուր բնաւորութիւն ստացաւ։ Ուրիշ երկիրների մէջ հակակրութիւնը դէպի հրէաները, մինչև անգամ ատելութիւնը հաղուագիւտ երևոյթ չէ, բայց դա ուղղված է լինում որ և է անհատի դէմ, որ այդ ատելութեան պատճառ է դարձել։ Իսկ քաղաքական իրաւունքների սահմանափակելը դաւանութեան պատճառով Արևմտեան Եւրոպայի մէջ հրէշաւոր գործ է համարվում։ Գերմանիայի մէջ, պրոֆեսոր Տրէյչկէի առաջնորդութեամբ սկսեցին այդ գործը ղեկավարել գերմանական ճշգրտութեամբ և ահագին չափերով։ Տրէյչկէ իր հետախուզութիւններով այն հետևանքի հասաւ, որ նա հրէաներին Գերմանիայի տարաբաղդութիւնը անուանեց և սկսեց քարոզել, որ 44 միլիոնաւոր գերմանական ժողովուրդը զոհ է դարձած կէս միլիոն հրէաների, որոնք կողոպտում են և նրանց արիւնն են ծծում։

Հշմարիտ է, հրէաներից մի քանիսի տգիտութիւնը և դատարկախօսութիւնը նպաստեցին հակահրէական շարժմանն, բայց այնու ամենայնիւ հրէաները առիթ չեն տուել, որ գործը այդքան մեծ չափեր ընտանար։ Այդ է պատճառը, որ ոչ ոք չը գիտէ, թէ ինչ բանի է ձգտում այդ շարժումը։ Հրէաների Գերմանիա գաղթելու սահմանափակելը և նրանց բարձր պաշտօններից զրկելը երբէք չէ կարող թուլացնել հրէական կապիտալի ոյժը, որ այդչափ զօրաւոր են ցոյց տալիս. ուրեմն եթէ այդ գործի առաջնորդողները կամենում են հասնել իրանց նպատակին, նրանք պէտք է խըլեն հրէաներից նրանց գումարները և բոլորովին արտաքսեն Գերմանիայից կամ ջարդեն նրանց։

Այսպիսի բարբարոս կարծիքը, ի հարկէ, անգործադրելի է։ Գերմանացի ուսուցչի և հրէայ գիմնազիստի մէջ պատահած անցքը չափազանց հետաքրքիր է։ Երբ հրէայ գիմնազիստը բողոքեց ուսուցչի տգէտ կարծիքների դէմ, այս վերջինը ասաց. ,,դուք հրէայ էք և ուրիշ ոչինչ'' այսինքն՝ հրէաները պէտք է չը պահանջեն, որ նրանց հետ այնպէս վարվեն, ինչպէս ուրիշ մարդկերանց հետ։ Հրէաները սատոր մարդիկ են և պէտք է փառք տան Աստուծուն, որ նրանց թոյլ է տուած ապրել Գերմանիայի մէջ։"

Գերմանական գիմնազիայի մի այլ ուսուցիչ, որ պատասխանատուութեան էր հրաւիրված հրէայ աշակերտի հետ վատ վարվելու պատճառով, յայտնեց, որ նա իբրև քրիստոնեայ իրան պարտաւոր է համարում կարելութեան չափ հալածել հրէայ աշակերտներին։ Այսպէս են նկարագրում հակահրէական շարժումը, որը, ինչպէս յայտնի է, Նորերումս դատապարտվեցաւ Բերլինի բնակիչների ահագին մեծամասնութեան կողմից։ Դժուար է մեկնել կառավարչական շրջանների հայեացքները այդ գործի վրա։ Գերմանական այժմեան մինիստրներից երկուսը հրէաներ են։ Այս հանգամանքը ոչինչ նշանակութիւն չունի, որովհետև մինիստրութիւնը համբերող գտնվեցաւ Շտէօկերի պալատական քարոզներին, որոնք ազգաբնակութեան մի դասակարգը զրգռում էին միւսի դէմ։ Նրքին գործերի մինիստրը մի հրէայի հարցին, թէ կառավարութիւնը ի՞նչպէս է մտադիր վարվել այդ գործի վերաբերութեամբ, պատասխանեց սառնութեամբ, որ հարկաւոր չէ համարում այդ ցոյցերի դէմ որ և է միջոցներ գործադրել, որովհետև մինչև այժմ նրանք յանցաւոր չեն եղել։ Իրաւաբանական տեսակէտից ի հարկէ այդ կարծիքը ճշմարիտ է, բայց կառավարութեան այդպիսի ներողամիտ քաղաքականութիւնը համոզեց հրէաների հալածողներին, որ կառավարութիւնը նրանց պաշտպանում է։ Մինչև անգամ գերմանական կայսրը այսպիսի կարծիք էր յայտնել և ցոյց էր տուել իր անբաւականութիւնը կառավարութեանը հակահրէական շարժումը պաշտպանելու համար։ Բայց այս հանգամանքը չարգելեց Շտէօկերին շարունակել իր քարոզները։ Միայն թագաժառանգը բացարձակ յայտնեց իր կարծիքը հրէաներին հալածելու մասին, որ նա ամօթալի փաստ անուանեց և ամեն անգամ, երբ յարմար դէպք է պատահում, նա նոյն կարծիքն է յայտնում։ Նշանաւոր է այն իրողութիւնը, որ հասարակութեան գիւրազգիռ ստորին դասակարգը չէ համակրում հակահրէական շարժմանը։ Շտէօկերին համակրողները հասարակութեան ստորին դասակարգի մէջ չափազանց քիչ են։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌՈՒԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 Նոյեմբերի։ „Правит. Вѣстн." լրագիրը հաղորդում է բարձրագոյն հետևեալ հրամանը։ պետական պօլիցիայի բաժինը և կատարող պօլիցիան միացնել, մի հիմնարկութիւն կազմել Պետական պօլիցիա անունով։ Ոչնչացնել ժանդարմների շտաբի և ներքին գործերի մինիստրութեան իրաւաբանական բաժինը։ Ներքին գործերի մինիստրութեան մէջ պատասխանական բաժին կազմել։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 25 Նոյեմբերի։ Երէկ բացվեցաւ կօնգրէսը։ Նախագահական ճառը ցոյց է տալիս երկրի արտաքին լաւ յարաբերութիւնները, ֆինանսների աջող դրութիւնը և առաջարկում է գրանտին նրա մատուցած զինուորական մեծ ծառայութիւնների համար գեներալ-կապիտան նշանակել։

ԼՕՆԴՕՆ, 25 Նոյեմբերի։ Դիւֆերինգ այսօր ուղևորվեցաւ Ս. Պետերբուրգ։

ՓԱՐԻԶ, 24 Նոյեմբերի։ Թիերի ամուսինը վախճանվեցաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 Նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 37 կ., երկրորդ 92 ր. 37 կ., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր., երկրորդ 216 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 75 կ., երկրորդ 91 ր., երրորդ 90 ր. 87 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,69 պէնս, Ամստերդամի վրա 124.87 պէնս, ռուսաց 100 ռուբլ Համբուրգի վրա 210 մարկ, Փարիզի վրա 260 Ֆրանկ Ֆր. 12 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՈՒՐՍ ԵԿԱԻ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

ԿԱՄՍԱՐ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

„РУССКОЕ СЛОВО“

Ընդունուած է Վրաստանի և Իմերէթի և Երևանայ հայոց բոլոր ծխական և միջնակարգ ուսումնարաններում, նոյնպէս Կովկասի և միւս թեմերի ուսումնարաններից շատերում:

Զորրորդ տպագրութիւն (ուղղած և աւելացրած)

Վաճառվում է Թիֆլիսում „Կեդրոնական“ և միւս բոլոր գրավաճառոցներում: գինն է 40 կ.: Դումարով առնողներին մեծ զիջումն կը լինի, եթէ դիմեն ուղղակի աշխատասիրողին այս հասցէով. Тифлисъ, Камсару Теръ-Давдянцъ, въ магазинѣ Бр. Абовьянцъ. 5—5

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ“

НА 1881 ГОДЪ, НА СЛѢДУЮЩИХЪ УСЛОВІЯХЪ:

СРОКИ.	Съ дост. въ Тифл. Руб.	Коп.	Съ пересылкою иногородн. Руб.	Коп.
На годъ	11	50	13	—
На полгода	6	—	7	—
На три мѣсяца	3	50	4	—
На одинъ мѣсяцъ	1	50	1	75

Подписка принимается въ г. Тифлисѣ, въ конторѣ газеты *Кавказъ*, на Барятинской улицѣ, въ домѣ подъ № 4. Иногородные адресуютъ свои требованія: въ Тифлисъ, въ редакцію газеты *Кавказъ*. 3—3

ՀԻՆԳՇԱԲԹԻ օր, 27-ին Նոյեմբերի կը սկսվի ՋԱՆՋՈՒՂԱՋՈՎՆԵՐԻ մագազինում տղամարդկանց կօշիկների և գդակների վաճառումն, զիջումով, առանց ածուրդի: Առնողները կարող են ընտրել և փորձել առած կօշիկները: Նոյն տեղ վաճառումն գինու և արաղի նշանակված գներով: 1—5

ՄԵՔԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ պղնձէ, ցինկի, արճիճի և ջրանցքների գործերի Եա. Եա. ԳԵՐՄԱՆԻ, գտնվում է Կուկիա, Միխայլովկայա փողոցի վրա, տուն № 52, Թիֆլիս:

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРДРУНИ

ОТДАЮТСЯ ВЪ НАЙМЫ

МАГАЗИНЫ

ВЪ ОБОРОНУ ГЕЦЛЕРЕОМ

վարձով տրվում են

ԽԱՆՈՒԹՆԵՐ

5—10

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՐՆ

ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ

Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

(Գօլովինսկի Պրօսպեկտի վրա, Աղէքսանդրեան այգու մօտ)

Բաժանորդագրվում են, թէ տեղական, թէ ռուսաց և թէ արտասահմանեան պարբերական բոլոր հրատարակութիւններին, նոյն իսկ խմբագրատանց յայտնած գներով: Օտար տեղերից թող բարեհաճեն դիմել հետևեալ հասցէով.

Въ Тифлисъ, въ газетное агентство В. Шавердова. 30—10



Կ. ՊԱՆՅԵՐ

ԷՏԷՄԷՆՍԿԱՅԻ ՓՈՂՈՑ



տուն Զուբալովի: Եկող ձմեռվայ սեզօնի համար առաջարկվում են պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՐԱՆԿՈՒԹԵԱՄԲ ՁԵՌՔԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԵՆԵՐ, Եւրոպական առաջնակարգ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ ամենանոր ՁԵՎԵՐԻ չափազանց էժան գներով, այլևայլն Ձեռքի մեքենանոր 12—15 ռուբլ, Ոտքի 50—80 ռուբլ: 31—52

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է տալ ՀԱՅԵՐԷՆ և ՖՐԱՆՍԻԵՐԷՆ լեզուների դասեր: Հասցէն կարելի է իմանալ գրավաճառ պ. Աւետիք Լէնֆիաջեանից: 1—8

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌՈՒՐ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պլանտատօրներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով: Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաօ և շօկոլադ-ֆրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէվոլվերներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թամբեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտոշներ, կալենկօր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ: Երծրունում գալլերէում: 6—100

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՅԻ ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ երկար ժամանակ պարապել է առուտրով, ցանկանում է ԿԱՌԱՎԱՐՉԻ, կամ կանոորշչիկի ՊԱՇՏՕՆ ստանալ: Հասցէն պէտք է թողնել „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը: 2—6

Հրատարակութեամբ Զ. Գրիգորեանցի՝ մամուլի տակից դուրս եկաւ պ. Ն. Սիմէօնեանցի աշխատասիրած հայոց դպրոցների համար ընդհանուր աշխարհագրութեան դասագրքերը, որոնք արդէն ընդունվել են ինչպէս Թիֆլիսի, նոյնպէս և գաւառների հայոց երկսեռ ուսումնարաններում և Ս. Էջմիածնի ճեմարանում:

Դասագրքերը վաճառվում են բացառապէս Կովկասեան գրավաճառանոցում Զ. Գրիգորեանցի:

Ա. տարի՝ Նախագիտելիք (Հայրենագիտութիւն Թիֆլիսի) 35 կ.

Բ. տարի՝ մասն ուսումնական և բնական (31 պատկերներով) 60 կ.

Գ. տարի՝ մասն քաղաքական (Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա) 60 կ.

Դումարով առնողին զիջումն կը լինի: 3—20

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Հաւմատեցէք թէյի ֆունտը			1 ր.	5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ					ֆ. 1 ր.	30 կ.
—	—	—	1 ր.	10 կ.	—	—	—	—		ֆ. 1 ր.	40 կ.
—	—	—	1 ր.	20 կ.	—	—	—	—		ֆ. 1 ր.	60 կ.
—	—	—	1 ր.	40 կ.	—	—	—	—		ֆ. 1 ր.	80 կ.
—	—	—	1 ր.	60 կ.	—	—	—	—		ֆ. 2 ր.	—
—	—	—	1 ր.	80 կ.	—	—	—	—		ֆ. 2 ր.	50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր.	—	—	—	—	—		ֆ. 3 ր.	

5—100

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԹԵԱՆ

ՄԵԾ ԻՇԽԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԵՐԹԵՑԻ

ԹՈՑԼՏՎՈՒԹԵԱՄԲ ԲԱՑՈՒԱԾ

Կուկիայում, Սիմէօնովկի փողոցի վերայ (կամրջից 3-դը Միխայլովկի փողոցի աջ կողմը), Հախվերդեանի տանը:

Հիւանդներին ընդունում են ամեն օր հետևեալ բժիշկները՝

Առաւօտեան ժամի 9—11

Նաւասարդեան—խիրուրգիական և վեներական (սիֆիլիտական) հ.

Բուդկովսկի—կանանց և ներքին հ.

Առաւօտեան ժամի 11—1

Լունկեվիչ—աչքերի, վեներական և կաշուի հ.

Շահազիզեանց—ներքին հիւանդութիւնների:

Երեկոյեան ժամի 5—7

Ուշակով—երեխայոց հիւանդութիւնների:

Պավլովսկի—ջղային, հոգեկան և ներքին հ.

Շաբաթ օրերը երեկոյեան ժամի 7—8 հիւանդներին ընդունում է ընդհանուր բժշկական խորհուրդը (консультація)

Էլեկտրաբուժութիւն—ամեն երեկոյեան ժամի 5—7:

Ծաղկահատութիւն (ծաղիկ կտրել) բժշկի ձեռքով առաւօտեան ժամի 9—11:

Գիշերապահ բժիշկը—երեկոյեան ժամի 9-իցը մինչև առաւօտեան ժամի 7-ը նպաստ է տալիս հիւանդներին նոցա տանը և հիւանդանոցում:

Հիւանդանոցումը կան և մշտական մահիճներ գիշերօթիկ հիւանդների համար:

Վարձ՝—երթևեկներից ցերեկը	— ր. 50 կ.
Փոքր օպերասիօններ իրանց վիրակապով	1 „ — „
Ընդհանուր բժշկական խորհրդի (консультація)	3 „ — „
Ծաղիկ պատուաստելու (կտրելու)	1 „ — „
Գիշերապահ բժշկին հիւանդանոցումը	1 „ — „
— հիւանդի տանը	3 „ — „

Գիշերօթիկ տեղերի վարձը առանձին համաձայնութեամբ:

Ընդքատները անվարձ են ստանում բժշկական խորհուրդ և դեղ:

Հիւանդանոցումը մշտապէս բնակվում է բժիշկ Նաւասարդեանը:

Դիրեկտոր բժշկապետ Պավլովսկի

Дозволено цензурою, Тифлисъ, 26 Ноября 1880 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.